

ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑԻ ԴԱՐԱԿԱԶՄԻԿ ԳՅՈՒՏԸ՝
ԱԶԳԱՓՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.69

Ամփոփում

Սույն աշխատությամբ գրերի գյուտի դիտարկումը բխում է անցյալի օրինակով նոր վերելք նախանշելու անհրաժեշտությունից: Մաշտոցի գործունեությունը քննվում է նրան սատարող Վռամշապուհ արքայի (այսուհետ՝ Վաղարշ Գ) (3) (8), և կաթողիկոս Սահակ Պարթևի համագործակցության լույսի տակ, քանի որ արքունիք-եկեղեցի միացյալ ուժերով հայ ազգն ունեցավ իր այբուբենն ու թվային աղյուսակը և անգամ պետականության կորստից հետո դարեր շարունակ ստեղծեց իր մեծ ու հզոր մշակույթը: Աշխատանքի նպատակն է ցույց տալ ճգնաժամային պահերին երկրի առջև ծառացող մարտահրավերների նմանությունը և հանուն համագգային շահի ներդաշնակ գործելու կարևորությունը: Դրա համար գրական աղբյուրներով ներկայացվել է V դարում տիրող եզրային՝ ազգին ուժացման տանող իրավիճակը, որին դեմ կանգնեց Վաղարշ Գ-ն: Նա, հակառակ իր ռազմատենչ եղբոր Խոսրով Գ-ի, ցույց տվեց, թե հանդուրժում է 387թ. երկրի կիսումը, բայց մերժեց օտար կրթությունը՝ հայոց դպրոցի կայացումը սկսելով այբուբենից: Դրա համար նա Մաշտոցին աշակերտների խմբով ուղարկեց արտասահման, 9 տարի (396-405թթ.) հոգաց նրանց ծախսերը, իսկ հետո լուծեց եկեղեցի-դպրոց-գրադարան բացելու բազմաճյուղ խնդիրները՝ պահպանելով խաղաղությունը ամբողջ տարածաշրջանում: Վաղարշ Գ-ի օրոք Մաշտոցն իրականացրեց գիտական և կազմակերպական իր փայլուն ծրագրերը, արքայի մահից հետո նորից դուրս եկավ միջազգային ասպարեզ, հանդիպեց Թեոդոս Բ կայսերը, վերացրեց Արևմտյան Հայաստանում դպրոցներ բացելու արգելքը, միավորեց երկրի հոգևոր կյանքը, իսկ վրացիների և աղվանների համար այբուբենների ստեղծելով՝ լուծեց նաև նրանց լինելիության հարցը:

Բանալի բառեր և արտահայտություններ: Մեսրոպ Մաշտոց, Վաղարշ Գ, այբուբեն, թվային աղյուսակ, պետական հովանավորություն, Աստվածաշունչ, թարգմանություն, դպրաշինություն, տարածաշրջան, միջազգային գործունեություն:

Ներածություն

Աշխատանքի մեջ ներկայացվել են IV-V դարերում Հայկական լեռնաշխարհում առկա գրավոր հուշարձանների տեսակները՝ ժայռապատկերներից ու սեպագրերից մինչև խեցեղենի վրա դրոշմված նշանագրեր, որոնք լեզվաբանների կողմից սովորաբար անտեսվել են, քանի որ աչքի առաջ պահվել է հնչյունական գիրը: Նշվել է Մաշտոցի կրկնակի գյուտի՝ այբուբենի ու թվային աղյուսակի համատեղման և մյուս մեծ ծառայությունների մասին, որոնցից են՝ հայոց այբուբենը արտերկրում ճանաչել տալը, Թեոդոս Բ կայսեր աջակցությունը շահելով՝ Արևմտյան Հայաստանում դպրոցներ բացելը, վրացիների և աղվանների համար այբուբեն ստեղծելը, Աստվածաշնչի թարգմանությանը երեք լեզվով զարկ տալը: Մի խոսքով, և՛ համազգային, և՛ միջպետական խնդիրների հաղթահարումներ, որոնց արժևորումը կարող է իրական ուղենիշ դառնալ նաև այսօր:

Մեթոդաբանությունը

Հոդվածի նյութի քննության համար կիրառել ենք ուսումնասիրության պատմահամեմատական և նկարագրական մեթոդներ:

Քննարկում

Նախամաշտոցյան շրջան: Հայոց լեզվի նախագրային՝ 2500 տարվա շրջանը (մ.թ.ա. III հազ.- V դ.) բաժանվում է երկու մասի՝ վաղնջահայերեն (մ.թ.ա. III հազ.- մ.թ.ա. XIII դ.) և հնագույն հայերեն (մ.թ.ա. XII դ. - մ.թ. IV դ.): Հարցը՝ արդյոք այդ ընթացքում հայերն ինքնուրույն գիր-գրականություն չունեին և, քննարկվում է առ այսօր: Նյութական հուշարձանները խոսում են լինելու օգտին: Պատմական Հայաստանի ամբողջ տարածքում՝ Վանից մինչև Խարբերդ, Էրեբունիից մինչև Արմավիր, սփռված են մ.թ.ա. IX-VI դդ. սեպագիր արձանագրություններ, որոնց սեղմ տարբերակները կնիքների և կավե ու բրոնզե իրերի վրա հանդիպում են այլազան նշանների համադրությամբ: Սեպագիրը վանկային գիր էր, զգալի առավելություն ուներ նշանագրերի կամ գաղափարագրերի համեմատ, սակայն ըստ հնագետ Հարություն Մարտիրոսյանի՝ վերջիններս, որ ծագել էին ժայռապատկերների դարաշրջանում, փոփոխվելով ու համալրվելով հանդերձ գործածվել են և՛ նախնադարում, և՛ Վանի թագավորության ժամանակ, և՛ հետո գուցե այն պատճառով, որ ավելի հասկանալի էին ժողովրդին: Նրա պնդմամբ՝ թեև Ուրարտուի անկումով սեպագրային պաշտոնական գիրը Հայքում վերացավ, սակայն նշանագրությունը գոյատևեց մինչև ուշ միջնադար. նշանագրերի ցուցակներ կան նույնիսկ XIV-XVI դարերի մագաղաթյա ձեռագրերում:

Սեպագրային լեզվի, այսպես կոչված, «ուրարտերենի» մասին տեսակետները տարբեր են: Հր. Աճառյանի և Հ. Մարտիրոսյանի կարծիքով

մ.թ.ա. IX դարի սեպագրերը դեռևս եղել են թշնամու՝ ասորական լեզվով, հետո մոտեցվել են տեղական լեզվին: Աճառյանը գրում է. «Երկու ամենահին արձանագրությունները, որ պատկանում են Սարգուրի Ա-ին (Թ դարի սկիզբ), գրված են ասորեստանյան լեզվով: ...Այնուհետև խաղիական լեզուն դարձավ խալդյանց բնեռագրության սովորական լեզուն» (1):

Մ.թ.ա. VIII-VI դդ. խալդյանց լեզվի մասին Հ. Մարտիրոսյանն ասում է. «Միջագետքյան սեպագիրը հարմարեցված էր ուրարտերենի հնչյունաբանությանն ու քերականական կարգին, մինչդեռ չէր կարող համապատասխանել հնդեվրոպական հայերենին: Հետագայում հեթանոս հայերի համար ավելի հարմար էր օգտագործել կատարելության հասցված ուրարտական նշանագրերը, որոնք հայտնի դարձան մոտ 80 տարի առաջ, երբ գերմանական գիտնական Լեհման-Հաուպտի արշավախումբը պեղումներ էր կատարում Տուշպայում (Վան), որտեղ կավե և բրոնզե առարկաների վրա մեծ քանակությամբ նշանագրեր կային: Այնուհետև այդպիսի նշանագրեր դիտվեցին Կարմիր բլուրի, Ալթին թեփեի, Արգիշտիխիլիի, Կայալի դերեի իրերի վրա: Վերջերս Լ. Բարսեղյանը հրատարակեց ուրարտական հայտնի 190 նշանագիր» (11):

Հեղինակը մի քանի աղյուսակով նշում է նաև, որ Հայաստանի նշանագիր-գաղափարագրերի 3-րդ՝ միջնադարյան խումբը պահպանվել է ձեռագրերի Բագմաթիվ ցուցակներում՝ «Նշանագիր այբուբենից», «Այս է նշանագիր հայոց ազգի», «Բացատրություն առաջնոց գրոց և նշանագրաց» խորագրերի տակ (11):

ՀԱՅԱԳԱԿԱՆ ՀԻԵՐՈԳԼԻՖԻԿ ՆՇԱՆՆԵՐ

ՍԴ VII

(ԸՍՏ Ա Գ ԱՐԴԱՆԱՅՄԱՆԻ)

1	10	19	28	37	46	55	64	73
2	11	20	29	38	47	56	65	74
3	12	21	30	39	48	57	66	75
4	13	22	31	40	49	58	67	76
5	14	23	32	41	50	59	68	77
6	15	24	33	42	51	60	69	78
7	16	25	34	43	52	61	70	
8	17	26	35	44	53	62	71	
9	18	27	36	45	54	63	72	

1. ԱՐԵՎԱԿ, 2. ԼՈՐԻՍ, 3. ԱՆՊԱՆ, 4. ԱՐԵՎԵԼԸ, 5. ԱՐԵՎՈՐԻՏԸ, 6. ՀԱՐԱԿ, 7. ԼՈՐԻՍ, 8. ԱՌԱԿՈՏ, 9—11. ԱՍՏԻ, 12. ԵՐԿԻՐ, 13—15. ԵՐԿԻՐ, 16, 78. ԽԱՉ, 17. ԱՇԽԱՐՀ, 18. ԽՈՅՆ, 19. ՓԱՅՆԱԿ, 20. ԴԱՅՆԱԿ, 21. ՅՈՐԼ (ՋՈՐԲՐ), 22—24. ՎՈՇԱՐ, 25. ԵՐԿՈՐՅԱԿ, 26—29. ԱՐԵՆԱԿՈՐ, 30. ԱՐՈՐՅԱԿ, 31. ԼԵՈՐ, 32—35, 37, 40, 41. ԱՐԵՅՈՐԻ, 36. ՋՈՐԻ, 38—39. ՋՐՀՈՍ, 42. ԱՆՄԱՀ, 43. ԱՆՎԱՐՅԱՆ, 44—45. ԱՆՔՈՐՄԱՍ, 46. ՍԱՐԻ, 47—48. ԱՌԱՅՆՈՐԻ, 49—50. ՍԱՐՏՈՐՈՍ, 51. ԱՆՊԱՐԿԵՏ, 52—54. ՀԵՏԱՍԵՐ, 55—56. ԵՐԲԱՅՐ, 57. ԿՈՍՊԱՏՏ, 58. ՈՐԻՐ, 59. ԺԱՌԱՆԳ, 60. ԴՏՈՐԻ, 61—63. ԿԵՆԴԱՆԻ, 64. ԹՈՇՈՐԻ, 65. ԳՈՐԻՆ, 66. ԳԱՎԱՏԱՆ, 67. ԱՍՏԻՏԱՆ, 68. ԼԵՏ, 69—71. ՎԱՐՔ, 72. ԱՇՏԱՐԱԿ, 73—74. ՏԱՏԱՐ, 75. ՃԱՆԱՊԱՐՀ, 76. ԴՈՐԻՆ, 77. ՀԱՄԱՓՈՐԻՐ:

Հայկական նշանագրեր՝ ըստ Ա. Աբրահամյանի (12)

Ի տարբերություն Աճառյանի և Մարտիրոսյանի՝ Մարգիս Այվազյանը պնդում է, որ սեպագիր բառարմատների 65, իսկ ածանցների 85-90 տոկոսը համընկնում են գրաբարյան ձևերին, հետևաբար «ուրարտերենը» վաղնշական հայերենն է (2):

Միով բանիվ, թեև լիովին պարզ չէ՝ ինչպիսին էր Վանի թագավորության պաշտոնական լեզուն, այնուամենայնիվ, հստակ է, որ սկսած նախնադարից Հայկական բարձրավանդակում եղել է հնագույն գրերի կենսունակ հաջորդականություն: Այս շրջայում հիշատակենք Արտաշես Ա-ից (մ.թ.ա. 189-160) մնացած սահմանաբաժան պյուները՝ իրենց պարզ գրերով, և դրանց հաջորդած մեհենական մատյանները՝ գառնիատիպ տաճարներում գրվող գրքերը, որոնք, ցավոք, շիությունների հետ ոչնչացվեցին քրիստոնեության ընդունման ժամանակ: Շատերի կարծիքով այդ մատյանների գիրը «դանիելյան տառերով» էր, որոնց նմուշը Վաղարշ Գ-ն բերել տվեց Եդեսիայից իր կառավարման 5-րդ տարում (394թ.):

Այժմ հարց. անկախ թվարկված գրերից՝ ինչպիսի՞ն էր հնչող խոսքը հիշյալ 2500 տարիների ընթացքում: Վաղնջահայերենից, ցավոք, վկայություններ չկան, իսկ Գողթան երգերի պատառիկներից երևում է, որ հնագույն հայերենի շրջանում մեր նախնիները Արտաշես արքայի ասքերը հյուսել են ճոխ ու պատկերավոր լեզվով: Այդ երգերի քերականությունն, ի դեպ, շատ նման է գրաբարին, ուստի կարելի է եզրակացնել, թե վաղնջահայերենն էլ առանձնապես տարբեր չի եղել:

Մեսրոպ Մաշտոցի սխարանքը: Մեսրոպ Մաշտոցը հայ իրականության, արդարև, ամենասիրելի ու մեծարված դեմքն է, քանի որ նրա անվան հետ է կապվում հայ մշակույթի Ոսկեդարը: 405թ. նա ստեղծեց ոչ միայն հայոց կատարյալ այբուբենը և թվային աղյուսակը, այլև սկիզբ դրեց թարգմանական և հայ ինքնուրույն գրականությանը, հիմնեց հայկական դպրոցների ցանցը, եկեղեցական արարողությունը դարձրեց հայերեն, և այդ ամենը՝ այն ժամանակ, երբ Հայաստանը կիսված էր, երբ Արևելքն ու Արևմուտքը կոիվ էին տալիս գերիշխանության համար՝ բերել-տանելով իրենց դրածոներին, և թվում էր՝ ամեն ինչ պիտի կորուսվեր:

Խորենացին գրում է, թե Ներսես Մեծի մոտ սնվել-սովորելուց հետո Մաշտոցը «...արքունական դռանը քարտուղար էր նշանակվել» (7), բայց աշխարհական բարքերից փախչելով՝ դեն է նետել մարմնական պատիվը և գնացել Գողթն գավառ, ապրել մենակյացի կյանքով: Կորյունը նշվածին լուրջ հավելումներ է անում՝ ասելով, թե Մեսրոպը պատանությունից ստացել էր հելլենական հիմնավոր կրթություն, եկել հասել «...Արշակունի թագավորների դուռը, կացել արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի սոված հրամանի ծառայողը՝ ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ: Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին» (9):

Վերջին նախադասությունից երևում է, որ Մաշտոցը դիրք ունեցող զինվորական է եղել դրանիկ գնդում: Արշակունիների ժամանակ (66-428թթ.) բանակի կորիզը արքունի գվարդիան էր՝ դրանիկ գունդն ու հեծելակներից կազմված թիկնազորը, որը Եղիշեն և Փավստոս Բուզանդը անվանում էին «Մատենիկ գունդ»: Երկրում գործում էին ռազմական դպրոցներ ազատների որդիների համար: Հռոմեական օրինակով Տրդատ Գ-ի (287-332թթ.) ռազմական բարեփոխումներից հետո հայոց զորքի հրամանատարությունը հանձնվել է չորս զորապետների (նախկին մեկ գլխավոր հրամանատարի փոխարեն), և ինչպես երևում է Զորանամակից, մինչև երկրի կիսումը (387թ.) Մեծ Հայքի զինված ուժերը բաղկացած են եղել արքունի (40 հազար հեծյալ) և սահմանակալ չորս բանակներից (80 հազար հեծյալ), որոնցից ամեն մեկն ունեցել է 18-21 հազար մարտիկ: Մշտական զորքը համալրվել է

ազատներից, իսկ հետևակագործը պատերազմների ժամանակ՝ ռափկներից (5):

Այս ամենին եթե ավելացնենք, որ Մաշտոցը ծառայել է Օլիմպոսի չեմպիոն Վարագդատ արքայի ավագ որդու՝ ռազմատենչ Խոսրով Գ-ի² արքունի բանակում, էլ ավելի պարզ կդառնա, թե ինչ էր նշանակում լինել դրանիկ գնդի զորական: Դա նշանակում էր տիրապետել հարձակման ու պաշտպանության մարտարվեստին, առաջիններից մեկը լինել ձիավարության, նիզականետման, վազքի, թրամարտի, կոխի, կռիվամարտի և այլ մարզաձևերում (10), (13): Ինքը՝ Վարագդատ թագավորը, հենց այդ տարիներին փառքով է պսակել հայ մարզիկի անունը: Դեռ պատանի տարիքում, չհնազանդվելով Շապուհին, նա փախել է Հռոմի կայսրություն. «...գրադվել զինավարժություններով, բոնցքամարտով, մասնակցել գազանամարտերի: Պապի սպանությունից հետո կարգվել է Հայաստանի թագավոր (374-378թթ.): Զրկվելով հայոց գահից՝ ապրել է Հունաստանում, շարունակել է մարզվել: Մասնակցելով 385-ին կայացած 291-րդ օլիմպիական խաղերի բոնցքամարտիկների մրցումներին՝ հաղթել է իր անչափ ուժեղ մրցակիցներին և հռչակվել օլիմպիական խաղերի չեմպիոն» (6):

Եզրակացությունն այն է, որ Մեսրոպն էլ, 23-25 տարեկանում լինելով դրանիկ գնդի զորական, եղել է ֆիզիկապես ուժեղ ու մարզված, տիրապետել զենքի արվեստին: Նրա ստեղծած այբուբենը՝ քառաշար սյունակներով, կատարյալ գործ է հիշեցնում, իսկ անձնական տոկունության մասին Կորյունի տեքստի վերծանող Մանուկ Աբեղյանը գրում է. «...Մաշտոցը հանդես է գալիս իբրև անսպառ եռանդի տեր, շնորհալի և ազդեցիկ տղամարդ, որ... շարունակ շրջում է և իր տեսչական այցելություններով հաստատուն հիմքերի վրա դնում սկսած գործը» (9):

Մաշտոցի մեծագույն առաքինությունը գիտելիքը ազգին ի սպաս դնելն էր: Դա է պատճառը, որ Խոսրովի՝ Պարսկաստանում բանտարկվելուց հետո՝ մոտ 4 տարի (389-393թթ.) նա Վաղարշ Գ-ի արքունիքում աշխատում է որպես դպիր, ապա թողնում է պալատական կյանքը, կարգվում վարդապետ և երկար դեգերումներով սկսում կրոնական քարոզչությունը: Այս մասին Խորենացին գրում է, որ նրա հեռանալը ծանր է նստել թագավորին Միջագետքի բանակցությունների ժամանակ. «Վռամշապուհը քիչ նեղություն չէր կրում քարտուղարի պատճառով, որովհետև այն օրից, որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում» (7):

² Խոսրով Գ-ին պարսից արքունիքը գահազրկել և բանտարկել էր Անիուշ բերդում՝ Մեծ Հայքը վերամիավորելու մեղադրանքով (8):

Կարծիք կա, որ Մաշտոցն իր դեգերումները սկսել է գուսանների Գողթան գավառից, քանի որ հին սովորությունը պահած միջավայրում ոչ միայն քարոզում էր, այլև փնտրում կորած գրերը: Կորյունը գրում է. «Երանելին այնուհետև... մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի ելք գտնի» (9), իսկ Խորենացին լրացնում է. «Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե՛ կարդացողը և թե՛ թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, ժողովրդին անհասկանալի էր մնում» (7):

Ավանդության համաձայն՝ Մաշտոցը հաստատվել է Մարվանիս գյուղում, շրջել տեղից տեղ, հիմնել քրիստոնեական համայնքներ, դարձի բերել հեթանոսական սովորություններով ապրողներին, մոլորությունից հետ պահել աղանդավորներին: Գողթնում, ապա Սյունիքում նա սուր է զգացել մայրենիով գիր ունենալու պահանջը, քանի որ տեսնել է, որ 387թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կիսված ժողովուրդը կարող էր կորցնել նաև ազգային ու կրոնական միասնությունը և հայտնվել գավթիչների հետ միաձուլվելու վտանգի առաջ:

Կարևորն այն է, որ Վաղարշապատ վերադառնալով՝ Մաշտոցը Սահակ կաթողիկոսին «...պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ» (9), իսկ երբ իմաց տվին թագավորին, պարզվեց, որ նա է՛լ ավելի տեղյակ էր գործին, քանի որ լսել էր ասորի մի եպիսկոպոսի՝ Դանիելի մասին, որ «հանկարծ գտել էր հայոց հին ավաբեստներն՝ նշանագրեր» (9): Ի տարբերություն Կորյունի՝ Խորենացին խոսում է ոչ թե հին, այլ հարմարեցված տառերի մասին՝ ասելով, որ երբ արքան գնացել էր Եդեսիա՝ հաշտեցնելու պարսկա-հռոմեական կողմերին, «...նրան ներկայացավ Հաբել անունով մի քահանա և խոստանում էր հայերեն լեզվի տառեր ստեղծել, որ հարմարեցրել էր Դանիել եպիսկոպոսը՝ իր մերձավորը» (7):

Այստեղ Եզնիկ Կողբացին Կորյունի և Խորենացու տեքստերին ավելացնում է մի կարևոր դրվագ, որն իր գրքում շեշտում է հայ մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը. «Շտապի՛ր, որ քո ժամանակո՛ւմ լինի Հայոց աշխարհի համար մեծ և օգտաբեր այս գյուտը, որն ապագայում քեզ պիտի բերի առավել մեծ շահ..., քան... քեզնից առաջ եղած քո Արշակունյաց տոհմակից նախնիներինը» (15):

Թագավորն իրապես էլ շտապում է և պալատական Վահրիճի ձեռքով Ասորիքի³ Եդեսիա քաղաքից բերել տալիս գրերը: Դա կատարվում է, ըստ երևույթին, 392 թ., այսինքն՝ նրա թագավորության ոչ թե հինգերորդ (ինչպես Կորյունի տեքստում է), այլ երրորդ տարում⁴: Փորձը տևում է մոտ երկու տարի: Մաշտոցն ու Սահակ Պարթևը հրաժարվում են հետագա ուսուցումից, քանի որ դանիելյան գրերը թերի էին: Կայացվում է բեկումնային որոշում՝ ստեղծել հայոց նոր ու ամբողջական այբուբեն, և Մաշտոցը աշակերտների խմբով մեկնում է Եդեսիա:

Այժմ ենթադրվում է, որ դանիելյան գրերը սեմական այբուբենների նման գուրկ են եղել ձայնավորներից ու, ամենայն հավանականությամբ, նաև այն բաղաձայններից (**դ, հ, յ** և այլն), որոնք չկային հունարենում: Մաշտոցի հանձարը փայլատակել է այն ժամանակ, երբ նա որոշել է տառ ստեղծել յուրաքանչյուր հնչյունի համար՝ հրաժարվելով ամեն տեսակի կետ-նշաններից: Նա իրարից տարանջատել է կոշտ և փափուկ **դ**-ն ու **լ**-ն (**աղի**-անալի), **ռ**-ն ու **ր**-ն (**դոռ**-դրկից), հատուկ տառեր է ստեղծել **հ** հազագի ու **յ** կիսաձայնի համար (ոչ թե **Ի**ակովբ, այլ **Յ**ակովբ, ոչ թե 'ող, այլ **հող**, ոչ թե ախս, այլ այս) և վերջապես գտել է եռաշարք բաղաձայնների՝ **բ-պ-փ...**, **ձ-ծ-ց**, **ջ-ճ-չ** նրբին տարբերությունները, որոնց ամբողջական շարքեր այլ լեզուներում կա՛մ իսպառ չկան, կա՛մ էլ, եթե կան, ապա գրվում են 2-3 տառով կամ նշաններով: Օրինակ՝ անգլերենը գուրկ է **պ, կ տ, ծ, ճ** պարզ խուլերից, իսկ **շ, ջ, ճ** հնչյունները գրվում են **sh, ch, tsh** ձևով:

Այսպիսով, հայոց այբուբենը՝ մեկ հնչյունին՝ մեկ տառ սկզբունքով և հավելյալ նշանների բացակայությամբ, կատարյալ է, գծագրությամբ՝ ամբողջական: Առանձնահատուկ է նաև այն, որ թվային շարքերի (միավոր, տասնավոր, հարյուրավոր, հազարավոր) շնորհիվ դարեր շարունակ կատարվել են թվաբանական բոլոր գործողությունները, որոնք մեծ ցանկերով ներկայացված են Անանիա Շիրակացու (VII դ.) թվաբանության ու աստղագիտության դասագրքերում:

Վաղարշ Գ-ի անուրանալի ավանդը: Հայոց քառաշար այբուբենի, այսինքն՝ տառերի ու թվերի կրկնակի գյուտը պատահական երևույթ չէր: Մեծ հավանականությամբ դրա իրական պատվիրատուն հայոց թագավոր Վաղարշ Գ-ն էր: Հնդկական թվերի տարածվելուց 300 տարի առաջ, բնական

³ Տիգրան Մեծի ժամանակ Ասորիքը կամ Հյուսիսային Միջագետքը կոչվում էր Հայկական Միջագետք՝ Մծբին (այժմ՝ Նիսիբին), Ամիդ (այժմ՝ Դիարբեքիր) և Եդեսիա (այժմ՝ Ուրֆա) քաղաքներով:

⁴ Մեջբերելով Աճառյանի կարծիքը՝ Մ. Աբեղյանը 59-րդ ծանոթ. մեջ ասում է, թե գրիչների տարբերությունն պատճառով «երրորդը» հավանաբար կարդացվել է «հինգերորդ» (9):

է, զանազան ձևով գրվող թվերի ու չափման միավորների խառնաշփոթ պետք է լինէր, իսկ թագավորը պետք է ուզէնար տնտեսությունը վարել միատարր նիշերով: Այստեղից եզրակացություն՝ մաշտոցյան հանձարը մեկ միասնական համակարգով երկնել է հայոց և՛ հոգևոր դաշտը, և՛ տնտեսությունը միավորող այբուբեն-աղյուսակ:

Հայոց երկարատև պատմության մեջ անգնահատելի է մնում Վաղարշ Գ Արշակունու դերը, քանի որ նա ապահովեց հարցի և՛ բարոյական, և՛ տնտեսական կողմը՝ Մաշտոցին իր աշակերտների խմբով Ասորիքի Եդեսիա-Ամիդ և Շոփքի Սամոսատ քաղաքներում պահելով 8-9 տարի (396-405թթ.). «Ս. Մեսրոպ Մաշտոցն իր մտահաղացումն իրագործելիս, ի դեմս Վռամշապուհ արքայի, գտավ ոչ միայն պաշտոնապես սատարողի, այլև գաղափարակցի» (4):

Եդեսիայում աշակերտները հմտանում էին ասորերենի, իսկ Սամոսատում⁵՝ հունարենի մեջ, որ տառերի պատրաստ լինելուն պես ձեռնամուխ լինեին Աստվածաշնչի թարգմանությանը: Հայ մշակույթն, այսպիսով, նոր ոլորտ էր մտնում: Սկսվում էր մատյաններ գրել-ծաղկելու և գրադարաններ հիմնելու դարաշրջանը:

Եթե չլինէր Վաղարշ Գ-ի պետականամետ, ազգային գործունեությունը և արքունի գանձարանը գործին ի սպաս դնելը, ապա գրերի հարցը գուցե և հետաձգվեր երկար ժամանակով: Ավելին, Մահակ Պարթևի հետ նա հովանավորեց թարգմանական գործը, և Աստվածաշնչի հայերեն օրինակը, որը հետագայում լրացվեց հունարենից, ճանաչվեց իբրև թարգմանությունների թագուհի, իսկ շատ մատյաններ փոխարինեցին բնօրինակներին:

Վաղարշ Գ-ի որդու՝ Արտաշես Դ-ի օրոք պետականության վերացումը մեծ կորուստ եղավ ազգի համար, սակայն կարճ միջոցում՝ 23 տարում (405-428թթ.), ծլունակ սերմերը ցանվել էին, շիվ էին տալիս և կրոնի, գրականության, երաժշտության, փիլիսոփայության, աշխարհագրության, նկարչության, երկրաչափության, աստղագիտության և այլ ուղղություններով լրացնում հոգևոր մթնոլորտը:

Մաշտոցի դպրաշինության ծրագիրը: Արևելյան Հայաստանի գավառներում դպրոցներ բացելու լավագույն օրինակը Արցախի Ամարասի վանքն է, որի անունը տալիս միշտ հիշում են, որ կից դպրոցը V դարի սկզբին բացել է հայոց առաջին ուսուցիչը: Ավելի ուշ, երբ Մաշտոցն

⁵ Սամոսատը (նաև՝ Շամուշատ, Արշամաշատ) Շոփք-Կոմմազենեի մայրաքաղաքն էր և շատ մոտ էր Փոքր Հայքին: Երվանդունիները մինչև Տիգրան Մեծի ժամանակներ այստեղ գահակալել են Երվանդունի հայ թագավորները:

անցնում է Մեծ Հայքի բյուզանդահայատակ գավառներ, սկսում է պայքար մղել բորբոքիտների աղանդի դեմ: Իբրև պարզև թեոդոս Բ կայսրը նրան շնորհում է ակումիտ՝ «անքուն, ճգնող» տիտղոսը, սակայն արգելում է զբաղվել դպրոցների հարցով, որի համար մերժել էր նաև Սահակ Պարթևին: Այս պատճառով 420-422 թթ. Մաշտոցը կաթողիկոսի նամակներով գնում է Կոստանանդնուպոլիս, հանդիպում կայսերն ու հունաց պատրիարք Ատտիկոսին, դիվանագիտական և գիտական հնարներով իրավունք ստանում դպրոցներ բացելու Արևմտյան Հայաստանում և նույնիսկ արժանանում մեծամեծ պարգևների: Իսկ թե նախապես ինչո՞ւ էին մերժում, պարզ է դառնում Խորենացու մեջբերած 3 նամակներից, որոնցից ամենամեծ մեղադրանքը հնչում է «Թեոդոսի թուղթը Սահակին» նամակում. «Մենք... քեզ շատ մեղադրեցինք, որ բոլոր սրտով միտվեցիր հեթանոս թագավորների կողմը և մեզ մինչև իսկ գրով հարկ չհամարեցիր տեղեկություն տալ: ...Արհամարհելով մեր քաղաքում եղող ճարտարներին՝ ինչ-որ ասորիների մոտ էիր որոնում իմաստության գյուտը: Այդ պատճառով մենք բարեհաճ էինք, որ մեր ծառաներն արհամարհեցին այդպիսի ուսումը: Բայց որովհետև Մեսրոպը հետո մեզ պատմեց, թե այդ արվեստը գլուխ եկավ երկնային շնորհով, մենք գրեցինք, որ ամենայն փութաջանությամբ սովորեն և քեզ պատվով ընդունեն» (7):

Ահա և երկնային շնորհի հիշատակումը, որով բյուզանդական կայսեր սիրտը փափկում է, և նա թույլ է տալիս, որ Արևմտյան Հայաստանում սովորեցնեն հայերեն:

Այս մասին, ի դեպ, մեր երկու հեղինակները հակադիր մոտեցում ունեն: Ի տարբերություն Խորենացու նշած տեսիլի՝ «Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս...» (7), Կորյունն ասում է. «Նա իր սուրբ աջով հայրաքաղաք ծնեց նոր և սքանչելի ծնունդներ – հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ (Եդեսիայում) շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիրողբաներով – կապերով» (9):

Այսպիսով, Թեոդոսի նամակից և երկու տեքստերի համեմատությունից երևում է, որ Մաշտոցն անտեսել է տարիների իր չարչարանքն ու նվաճումը, միայն թե շահեր կայսեր դրական վերաբերմունքը և Արևմտյան Հայաստանում նույնպես բացել հայոց դպրոցներ: Հայքի կողմնորոշման համար մղվող պայքարը, սկսած Երվանդյանների ժամանակներից, մեծ խանդով շարունակվում էր 5-րդ դարում: Արևելքն ու Արևմուտքը, մե՛կ սիրաշահելով, մե՛կ պատերազմելով, ամեն ինչ անում էին՝ իրենց կողմը թեքելու հայերին: Կայսրը մեղադրում էր, որ իրենց անտեսում են, իսկ պարսիկներն ուղղակի արգելում էին հունարենը՝ պարտադրելով ասորերեն: Աղվանքից վերադառնալիս

Մաշտոցը տեսնում է, որ «Մեծն Սահակ զբաղված է Սուրբ գրքի թարգմանությամբ ասորերենից, հունարեն չգտնելու պատճառով: Որովհետև... պարսիկ վերակացուներն իրենց մասում ոչ ոքի թույլ չէին տալիս հունարեն սովորել, այլ միայն ասորերեն» (7): Իսկ սեմական լեզվի խրթնության մասին Ղազար Փարպեցին գրում է. «Ամեն մարդ սրտագին փափագում էր հայերեն գիտության ուսումը և ուրախ էր, որ փրկվում էր ասորերենի պատճառած տանջանքներից, որպես խավարից դեպի լույս ելներ» (15):

Պատկերը չի փոխվել նաև XXI դարում, թեև խաղացող կողմերն ավելի շատ են և բոլորովին այլ ազգեր: Զարմանալին այն է, որ հին մեծապետներից ասորիներն այսօր գրեթե բնաջինջ են եղել և իրենց լեզվի ու մշակույթի փրկության հարցում այժմ գերազանցապես ապավինում են հայերիս, պարսիկները, հույները, ինչպես նաև հետազայում մեր դեմ ելած արաբները դարձել են բարեկամներ, իսկ նոր բնակալող թուրք հարևաններին ավելացել են Հյուսիսն ու Արևմտյան կիսագունդը: Նույնն է մնացել կովախնձորը՝ Հայք-Հայաստանը՝ փրկության իր նոր մարտահրավերներով, որոնց հաղթական ելքը կրկին երևում է դպրաշինության հզոր առանցի մեջ:

Մաշտոցի միջազգային գործունեությունը կարելի է բաժանել 3

շրջանի՝

1. 405-ին հայոց այբուբենի համար ճանաչում ապահովելը,
2. Վիրքում, Աղվանքում և բյուզանդահպատակ տարածքներում աղանդների դեմ պայքարը,
3. հարևան երկրներին գիր պարզեցնելը:

Առաջին դեպքում հիացմունքի արժանին Մաշտոցի հեռատեսությունն է: Նա գիտեր, որ համազգային գյուտը հարկավոր հնչեղությունը չէր ունենա, եթե հենց սկզբից չապահովեր հայոց այբուբենի ճանաչումը, և այդ իսկ պատճառով հատուկ հանդիպումներ է խնդրում հոգևոր առաջնորդներից: Կորյունը գրում է, որ Սամուսատի հույն եպիսկոպոսը, ապա և Եդեսիայի հոգևոր առաջնորդը բազում զովասանքներով են ընդունում նրան, հանձնում իրենց ավետագրերը, որոնցով Մաշտոցը վավերացնում է դարակազմիկ նորույթը և հետո միայն աշակերտների խմբով վերադառնում հայրենիք:

Որպես նվիրյալ քրիստոնյա՝ Մաշտոցը բացառիկ գործունեություն է ծավալում քարոզչության մեջ՝ ուղղափառ հավատի բերելով նեստորականության և այլ աղանդների հետևորդներին, իսկ իբրև մեծ մարդասեր՝ ընդառաջում է հարևան քրիստոնյա երկրներին՝ նրանց համար ևս ստեղծելով գիր, դպրոց և ազգային լեզվով Աստվածաշունչ: Զաղա անունով թարգմանչի՝ հետո նա վրացիներին օգնում է հունի մեջ գցելու նորաստեղծ դպրոցը՝ ուսուցիչներ թողնելով իր աշակերտներից, իսկ

աղվաններին (գարգարներ) օգնում է թարգմանելու Աստվածաշունչը և տարածելու նոր գիրքը. «Նա նշանագիրներ ստեղծեց գարգարացոց այն կոկորդաձայն, կոշտ, խժական, կոպիտ լեզվի համար՝ այնտեղ վերակացու թողնելով իր Հովնաթան աշակերտին, նաև արքունական դռանը քահանաներ նշանակելով» (7):

Վրացիները մաշտոցյան այբուբենը՝ խուցուրին, գործածել են մինչև XII դար, իսկ աղվանական տառերն առ այսօր կարելի է տեսնել լեզգիների գրավոր խոսքում: Ձեռագիր մատյաններում պահպանված այդ զույգ այբուբենները բավական նման հայոց տառերին, այժմ ցուցադրվում են իր իսկ՝ Մեսրոպ Մաշտոցի անունը կրող Մատենադարանում: Որոշ բանասերներ խոսում են նաև Մաշտոցի կողմից Կասպից ծովի հյուսիս-արևմուտքում ապրող վաչկատուն ցեղերի՝ հոների համար այբուբեն ստեղծելու մասին, բայց, ցավոք, այդ գրերը մեզ չեն հասել:

Մաշտոցի սրբադասումը: Մաշտոցը ստեղծողի և ուսուցանողի իր վեհ կերպարով ուղենիշ մնաց բոլոր ժամանակների համար: Դեռևս կենդանության օրոք անվերապահ մեծարվելը, իսկ մահից հետո սրբադասվելը և վարքի արժանանալը ցույց են տալիս, որ նա իսկական մեսիայի՝ փրկչի համարում ուներ ազգի համար: Նա իր աստվածատուր շնորհով իրականացրեց հայությանը հավաքելու և առաջ տանելու բոլոր հնարավոր ծրագրերը: Անգամ այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանը կորցրեց պետականությունը, և ամբողջ երկիրը մնաց օտարների լծի տակ, Մաշտոցը չդադարեցրեց իր գործունեությունը: Նա առավել մեծ եռանդով շարունակեց թե՛ Աստվածաշնչի թարգմանությունը, թե՛ երկրորդ մեկ շրջագայությունները, թե՛ եկեղեցի ու դպրոց բացելը, թե՛ արժանի տեղապահներ կարգելը, թե՛ աղանդների դեմ պայքարը և թե՛ հարևաններին ձեռք մեկնելով՝ բարեկամ շրջապատ ստեղծելը: Թվարկված գործերից ամեն մեկը հերիք էր, որ ցանկացած անհատ անուն թողներ պատմության մեջ, սակայն Մաշտոցի հանճարը ճաճանչեց բոլոր ուղղություններով և լուսավորեց հետագա բոլոր սերունդների կյանքը: Նրա պատասխանատու վարքը ուղերձ դարձավ դարերի մեջ և սովորեցրեց, որ դժվարին հարցերի բախվելիս ցավի արմատը պետք է բացել մինչև վերջ, որպեսզի լուծումն էլ լինի լիարժեք: Այսպես՝ ոչ թե օտար վայրից բերված թերի նշանագրեր, որոնց կարելի էր հարմարվել, այլ հատիկ-հատիկ ստեղծվող հնչյունային ամբողջական այբուբեն, ոչ թե միայն ասորերենից, այլև հունարենից կատարվող քննական թարգմանություն, ոչ թե երկրի մի կեսի, այլ ամբողջի զարգացում, ոչ թե գերակայություն շրջակա թույլ զարգացած երկրների նկատմամբ, այլ կամեցողություն և բարեկամություն այդ երկրների հետ...

Գործի ամբողջ ծավալը և աշխարհագրությունը հասկանալու համար ասենք, որ Մաշտոցը երրորդ անգամ Արևմտյան Հայաստան այցելեց 420-

ական թթ. վերջերին, եղավ Բարձր Հայքի Դերջան, Եկեղյաց, Սպեր, Շաղագունք գավառներում: Առաջացած տարիքում նա Աղվանքից անցավ Ուտիքի Գարդման գավառ, ապա Տաշիր, 431-439թթ. Սահակ Պարթևի ու աշակերտների հետ ավարտեց Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը հունարենից, ի մի բերեց իր քարոզները, ուղերձները, ճառերն ու շարականները (երգվում են հատկապես Մեծ պահքի շրջանում) և «Մուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո՝ մեհեկան ամսի 13-ին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում», - գրում է Խորենացին և ավելացնում. «...Նա հրեշտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք, պայծառ էր խոսքով, գործերով՝ ժուժկալ, մարմնով՝ փառահեղ, հավատով՝ ուղիղ, հույսով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելիս՝ անձանձրույթ...» (7):

Մակդիրները ամենաբնութագրողը՝ անձանձրույթ, լույս սփռեց դարերի վրա և մեր մեծ մշակի հանգստարանը դարձրեց սրբատեղի...

Եզրակացություններ

Մեծ Հայքի տարածքում՝ բազմազան գրերի առկայության պայմաններում, Մեսրոպ Մաշտոցը բացեց մի նոր դարաշրջան՝ ստեղծելով միանգամայն նոր ու ամբողջական, հնչյունային կատարյալ այբուբեն, որ միաժամանակ թվային աղյուսակ է:

Աղբյուրների համար կիրառվում են տեսանյութեր, որոնք ներկայացնում են.

ա. պատմական Հայաստանի և հարակից երկրների՝ Ասորիքի, Վիրքի, Աղվանքի, Բյուզանդական կայսրության և Պարսկաստանի քարտեզները, նաև այն վանքերն ու եկեղեցիները, որտեղ Մաշտոցը բացել է դպրոցներ:

բ. Մատենադարանում պահվող Մաշտոցի ստեղծած երեք այբուբենները, հայ պատմիչների գրքերը, դրանց ձեռագրերը, Աստվածաշնչի ամենահին օրինակները:

գ. Արդի ձեռքբերումները այն հայ գիտնականների, որոնք, տարբեր երկրներում ապրելով, շարունակում են բարեփոխել ամբողջ մարդկության կյանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հ. (1984), Հայոց գրերը, «Հայաստան» հրատ., Երևան, 400 էջ:
2. Այվազյան Ս. (2003), Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, ԵՊՀ հրատ., Երևան, 117 էջ:
3. Արշակունիներ, Վիքիպեդիա, դիտվել է 2023 թ. հունիսին:

4. Դանիելյան Է., Վռամշապուհ արքայի պետական մոտեցումը հայ գրերի գյուտին, Համահայկական թվանշային գրադարան, դիտվել է 2023:
5. Զինված ուժեր, Մեծ Հայքի թագավորության զինված ուժերը Արշակունիների օրոք, Վիքիպեդիա, 2022, դիտվել է 2023 թ. հունիսին:
6. Իսպիրյան Ս., Առաքելյան Վ. (2003), Մարգական հանրագիտարան, Սոս և Վոգա հրատ., Երևան, 352 էջ:
7. Խորենացի Մովսես (1981), Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 426 էջ:
8. Կատվալյան Ս., Վռամշապուհ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի զլխ. խմբ., 2002, 1072 էջ:
9. Կորյուն, (Հայոց մատենագիրներ) (1994), Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, «Հայաստան» հրատ., Երևան, 177 էջ:
10. Հարությունյան Ա. (2006), Հայ ժողովրդի ռազմաֆիզիկական դաստիարակության միջոցների տեխնիկա-տակտիկական գործողությունների դասկարգումը, ՖԿՀՊԻ XXXIII հանրապետ. գիտամեթոդ. կոնֆերանս, Երևան, էջ 83-86:
11. Ղաֆադարյան Կ. (1939), Հայկական գրի սկզբնական տեսակները, Արմֆան հրատ., Երևան, 93 էջ:
12. Մարտիրոսյան Հ. (1978), Գիտությունն սկսվում է նախնադարում, «Սովետական գրող», հրատ., Երևան, 206 էջ:
13. Ռազմական խաղեր, Վիքիպեդիա, 2023 թ.: Դիտվել է 2023 թ. հունիսին:
14. Տեն Հ. (1936), Գեղարվեստի փիլիսոփայությունը, Պետհրատ, Յերևան, 534 էջ:
15. Փարպեցի Ղազար (1982), Հայոց պատմություն. Թուրք Վահան Մամիկոնյանին, ԵՊՀ հրատ., Երևան, 538 էջ:

REFERENCES

1. Acharyan H. (1984), Hayoc grery'/ Armenian writings/, "Hayastan" ed., Yerevan, p. 400.
2. Ayvazyan S. (2003), Vani t'agavorowt'yan sepagir ard'anagrowt'yownnery' /Cuneiform Inscriptions of the Kingdom of Van/, YSU ed, Yerevan, p. 117.
3. Arshakowniner, Vikipedia /Arshakunis, Wikipedia/, 2023, viewed in June 2023.

4. Danielyan E., Vr'amshapowh arqayi petakan motecowmy' hay gleri gyowtin /Vramshapuh king's state approach to the invention of Armenian writing/, Pan-Armenian Digital Library, viewed in June 2023.
5. Zinvac' owjher, Mec' Hayqi t'agavorowt'yan zinvac' owjhery' Arshakownineri o'roq /Armed Forces, Armed Forces of the Kingdom of Great Hayk under the Arshakunis/, Wikipedia, 2022, viewed in June 2023.
6. Ispiryan M. (2003), Arakelyan V., Marzakan hanragitaran /Sports Encyclopedia/, “Sos and Voga” ed., Yerevan, p. 254.
7. Khorenatsi Movses (1981), Hayoc patmowt'yown /History of Armenia/, YSU ed., Yerevan, p. 426.
8. M. Katvalyan, Vr'amshapowh /Vramshapuh/, Encyclopedia of Christian Armenia, p. 984, Yerevan, Chapter of the Arm. Enc. ed., 2002, 1072 p.
9. Koryun, (Armenian chroniclers) (1994), Varq S. Mesrop Mashtoci /Life of Mashtots/, “Hayastan” ed., Yerevan, p.177.
10. Harutyunyan A. (2006), Hay jhoghovrdi r'azmafizikakan dastiarakowt'yan mijocneri texnika-taktikakan gorc'oghowt'yownneri daskargowmy' /Classification of technical-tactical actions of means of military physical education of the Armenian people/, XXXIII republic of ASIPCS scientific method conference, Yerevan, pp. 83-86.
11. Ghafadaryan K. (1939), Haykakan gri skzbnakan tesaknery' /Early types of Armenian writing/, “Armfan” ed., Yerevan, p. 93.
12. Martirosyan H. (1978), Science begins in prehistory, “Sovetakan grogh” ed., Yerevan, 206 p.
13. R'azmakan xagher /War Games/, Wikipedia, 2023. Viewed in June 2023.
14. Ten H. (1936), Gegharvesti p'ilisop'ayowt'yowny' /Philosophy of Art/, Yerevan, “Pethrat” ed., p. 534.
15. Lazar Parpetsi (1982), Hayoc patmowt'yown. T'owght' Vahan Mamikonyanin /History of Armenia. Letter to Vahan Mamikonyan/, YSU ed., Yerevan, p.538.

Арменуи Демирчян

Особый инвентарь Месропа Маштоца, как ориентир национального спасения

Заклучение

Ключевые слова и выражения: Месроп Маштоц, Вагарш В, алфавит, числовая таблица, государственный патронаж, Библия, перевод, создание школ, регион, международная деятельность.

Рассмотрение изобретения письменности в данной работе связано с необходимостью наметить новый общественный подъем на примере прошлого. Разносторонняя деятельность Маштоца рассматривается в свете сотрудничества царя Врамшапуха (далее Вагарш III) и католикоса Саака Партева, которые всегда оказывали ему поддержку, ибо объединенными силами двора и церкви армянский народ получил свой алфавит и числовую таблицу, и даже после потери государственности создал свою великую мощную культуру. Цель работы – показать схожесть задач, стоящих перед страной в период кризиса, и важность слаженной работы в национальных интересах. Согласно литературным источникам, в V в. н. э. сложилось критическое положение для армян, ведущее к ассимиляции, с чем царь Вагарш III начал борьбу, показав свою политическую дальновидность. В отличие от своего воинственного брата Хосрова IV, он в 387 году проявил терпимость к разделу страны, но запретил иноземное образование. Часть доходов государства он использовал под создание армянской школы, и, начав с алфавита, он послал Маштоца со своими студентами в 9-летнюю (396-405 гг.) научную экспедицию за границу, покрывая все расходы. После этого, вплоть до своей смерти (414 г.), Вагарш III решал многоплановые задачи по открытию библиотеки, церквей и школ, сохраняя мир во всем регионе. Благодаря таким условиям Маштоц смог проявить свои блестящие научные и организаторские способности. Даже после смерти Вагарша III, снова выйдя на международную арену, Маштоц с разрешения византийского императора Теодоса II открыл школы и объединил духовную жизнь страны, а создав алфавиты для грузин и агванцев, решил вопрос о их существовании.

Armenuhi Demirchyan

Shelving inventory of Mesrop Mashtots sign of national defense

Conclusion

Key words and expressions: Mesrop Mashtots, Vagharsh C, alphabet, numerical table, state patronage, Bible, translation, school construction, region, international activity.

In this work, the invention of writing is examined from the need to strive for a new rise by the example of the past. Mashtots' activities are examined in the light of the cooperation of king Vramshapuh (hereafter Vagharsh III) and the Catholicos Sahak Partev, who always supported him, as with the combined forces of the court and the church, the Armenian nation had its own alphabet and number table, and even after the loss of the statehood it created its great and powerful culture for centuries. The purpose of the work is to show the similarity of the challenges facing the country in times of crisis and the importance of being together for the national benefit. For this, literary sources presented the extreme situation leading to assimilation of the nation in the 5th century, which was opposed by Vagharsh III with his visionary policy.

He, unlike his warlike brother, Khosrov D, showed that he was tolerant with the sharing the country, in 387, but said no to foreign education. He used state revenues to establish the Armenian school, starting with the alphabet, for which he sent Mashtots with his students abroad, covering their expenses for 9 years (396-405). After that, until his death (414), Vagharsh III solved the various problems of opening a library, a church and schools keeping the peace in the entire region. Thanks to him, Mashtots showed his scientific and organizational brilliant abilities. Even after the death of Vagharsh III, again entering the international arena, Mashtots opened schools with the permission of Byzantium emperor Teodos B and united the spiritual life of the country, and by creating alphabets for Georgians and Aghvans, he solved the question of their existence.

Արմենուհի Դեմիրճյան – բանասիրական գիտությունների թեկնածու, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) հումանիտար ամբիոնի դասախոս, ԳԱԹ մ/ճ Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ արդի և սփյուռքահայ գրականություն, մշակութաբանություն, վաղնջական, հնագույն և հին շրջանների պատմություն, հայ ազգի ծագումնաբանության ուսումնասիրություն: Հեղինակ է երկու ձեռնարկ-դասագրքի, տասնյակ հոդվածների, գիտահանրամատչելի ֆիլմերի և գեղարվեստական գրքերի:

armenuhidemirchyan@gmail.com

Арменуи Демирчян – кандидат филологических наук, преподаватель кафедры гуманитарных наук Арменского государственного института физической культуры и спорта, заведующая домом-музеем Сильвы Капутикян. Научные интересы: современная армянская литература и литература Диаспоры, культурология, история древнейших и древних

регионов, изучение генеалогии армянского народа. Автор двух учебников, десятков статей, научно-популярных фильмов и художественных книг.

armenuhidemirchyan@gmail.com

Armenuhi Demirchyan - doctor of philological sciences, lecturer of the humanities chair of ASIPCS, director of the house-museum of Silva Kaputikyan. Scientific interests: modern and Diaspora Armenian literature, cultural studies, history of ancient regions, study of the genealogy of the Armenian nation. She is the author of two textbooks, dozens of articles, popular science films and art books. armenuhidemirchyan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 12.12.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.12.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.